

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ
ՄԱՐՏԻ 8-Ի ԱՌԹԻՎ**

05.03.2011

Միրելի կանայք, ի սրտե շնորհավորում եմ Ձեզ գարնանային այս գեղեցիկ տոնի՝
Կանանց միջազգային օրվա առթիվ:

Պատմության բոլոր քառուղիներում անփոխարինելի է եղել Հայ Կնոջ դերը. ի
վերուստ Ձեզ է վստահվել օջախի ամրության եւ շենացման, սերունդների կրթության
եւ դաստիարակության, ազգային արժեքների պահպանման եւ փոխանցման դժվարին
ու պատասխանատու առաքելությունը, որը միշտ պատվով եք իրականացրել՝
միաժամանակ չկորցնելով Ձեր կանացի հմայքն ու քնքշությունը:

Այսօր միանգամայն ակնհայտ է ձեր ներգրավվածությունը նաեւ պետական,
քաղաքական եւ հասարակական կյանքի տարբեր բնագավառներում, որն անչափ
կարեւոր է եւ միանաշանակ նպաստելու է մեր նորանկախ պետության շենացմանը եւ
հետագա վերելքին:

Գարնանային այս գեղեցիկ տոնից՝ Մարտի 8-ից սկիզբ առնող Կանանց միամսյակը
եւս մեկ հրաշալի առիթ է մեր երախտիքի եւ գնահատանքի խոսքերը հղելու Ձեզ՝ Ձեր
նվիրումի, հոգատարության, ազգապահպան ու անկոտրուն ոգու եւ ոգեշնչող
ներկայության համար:

Վերստին շնորհավորում եմ Ձեզ՝ մաղթելով քաջառողջություն, անսահման սեր ու
երջանկություն եւ հաջողություններ Ձեր բարի ու նվիրական
նախաձեռնություններում:

Բարին ընդ Ձեզ:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ